

Մարդահամարի անցկացումը

THE CENSUS CONDUCTION

ПРОВЕДЕНИЕ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ

Համաձայն «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2000թ. փետրվարի 19-ի թիվ 78 որոշման 2001թ. հոկտեմբերի 10-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում, անկախության պայմաններում, անցկացվեց առաջին մարդահամարը:

Բնակչությունն ամբողջ հանրապետությունում հաշվեգրվեց միևնույն հստակ պահի՝ մարդահամարի հաշվառման պահի դրությամբ: Այն սահմանվեց հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերը՝ ժամը 12-ը:

2001թ. հոկտեմբերի 20-ից 25-ը անցկացվեց ընտրանքային վերահսկիչ շրջագայություն բնակչության հաշվառման ամբողջականությունն ու ձգարտությունը ստուգելու նպատակով: Ընտրանքն անցկացվեց քաղաքների և գյուղական վայրերի բոլոր հաշվային տեղամասերում, ընդգրկելով յուրաքանչյուրում բնակելի միավորների 10 %-ը:

Մարդահամարն անցկացվեց հաշվարարների կողմից՝ շրջագայելով իրենց տեղամասում տեղակայված բոլոր տները (շինությունները): Բնակչությունը հաշվեգրվեց ըստ բնակության վայրի, ներառյալ ժամանակավոր բնակության:

ՀՀ 2001թ. մարդահամարի ժամանակ հաշվառվեց բնակչության 2 կատեգորիա՝ մշտական և առկա:

Մարդահամարի հարցաթերթը կազմվել է տնային տնտեսությունների՝ անհատական և խմբային (ինստիտուցիոնալ) համար: Յուրաքանչյուր տնային տնտեսության համար լրացվել է առանձին հարցաթերթ, այն ընդգրկել է 32 անհատական և տնային տնտեսության բնակության պայմանները բնութագրող 15 հարց (տես հարցաթերթը):

According to the law on “ Census” of the RA and by the decision 78 of February 19, 2000 the first census of the RA was carried out in October 10 - 19, 2001 in conditions of independence . The population of the whole Republic was calculated at the same precise instant, post enumeration night.

It was the midnight of October 10 at 12 o'clock. In order to check the completeness and accuracy of the census of the population a sample supervisory round was carried out from October 20 till 25.

The selection was realized in all the enumeration areas of cities and villages including 10 percent of each dwelling unit. The census was carried out by the enumerators who were going from house to house, which were situated in their area. The population was registered according to the dwelling place, including temporary abode.

The de jure and de facto categories of the population were calculated during the census of the RA in 2001.

The census questionnaire was formed for individual and group (institutional) households which included 32 individual and 15 questions about the housing conditions of household. (See Questionnaire).

Согласно закону РА “О переписи населения” и постановлению правительства РА 78 от 19-го февраля 2000г. с 10-19 октября 2001г. была проведена первая, в условиях независимости, перепись населения Республики Армения.

Население по всей республике было зарегистрировано к четкому моменту- учета переписи населения. Он был установлен на полночь с 9 по 10 октября. С целью проверки целостности и точности учета населения, с 20-25 октября 2001г. был проведен выборочный контрольный обход. Выбор был произведен во всех счетных участках городов и сельских местностей, охватывая в каждом 10 процентов жилых единиц.Перепись населения была проведена счетчиками, обходящими все дома (строения), расположенные на их участках. Население было учтено по месту жительства, включая временное. Во время переписи населения было учтено две категории населения- постоянное и наличное.

Вопросник переписи населения был составлен для индивидуальных и групповых (институциональных) домашних хозяйств. Для каждого домашнего хозяйства был заполнен отдельный вопросник, который включал в себя 32 индивидуальных и 15 вопросов, характеризующих условия проживания домашних хозяйств (см. Вопросник).